ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն .....

«.....».....2023թ.

ՆՈՐԱԿԵՐՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ

ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

2023-2024 ուստարի

VIII^{ա} դասարան

Միքայել Հռիփսիմե

ԴԱՍԱՐԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆՁՆԱԳԻՐԸ

1·Աշակերտների քանակը դասարանում ա) աղջիկ բ) տղա	18 6 12
2. Անապահով ընտանիքներ	3
3. Երեք և ավելի դպրոցահասակ աշակերտներ ունեցող ընտանիքներ	
4. «Ռիսկային խմբի» ընտանիքների թիվ	
5.Միակողմանի կամ երկկողմանի ծնողազուրկ աշակերտների թիվ	
6. Դասերից հաճախակի բացակայող երեխաներ	
7. Դժվար դաստիարակվող երեխաներ	
8. ԿԱՊԿՈՒ աշակերտների թիվ	

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը):

VIII *դասարանը բաղկացած է 18 աշակերտներից, որից՝ 12-ը տղա, 6-ը աղջիկ: Ընդհանուր առմամբ աշակերտները ունեն բավարար ընդունակություններ: Կան գերազանց սովորող աշակերտներ: Դասարանում բոլոր աշակերտները համախմբված են, ընկերասեր և պարտաճանաչ: Դասարանում չկան դժվար դաստիարակվող աշակերտներ: Ուսուցիչների և դասղեկի կողմից հետևողական աշխատանքներ են տարվում բարձրացնելու դասարանի ուսմանառաջադիմությունը:*

Բացահայտել և գնահատել ԿԱՊԿՈՒ սովորողներին՝ համագործակցելով ՄԿԱ գծով փոխտնօրենի, հոգեբանի , ուսուցչի օգնականների և ՏՄԱԿ-ի հետ:

Տարեվերջյան հաշվետվության մեջ ներկայացնել սովորողների առաջադիմության, ինչպես նաև հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն տնօրինությանը:

2. Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում:

Դաստիարակությունը դպրոցական կրթության կարևոր բաղադրիչ է, որի հիմնական խնդիրներն են՝ սովորողների մեջ քաղաքացիական պատասխանատվության և իրավական գիտակցության ձևավորումը, հոգևոր դաստիարակությունը, նախաձեռնության, ինքնուրույնության, հանդուրժողականության խթանումը, ինչպես նաև հասարակության մեջ ինտեգրվելուն նպաստելը: Ուսումնա-դաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսմանառաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը, պահպանել ծնող-աշակերտ-դպրոց կապը: Աշխատանքներ տանել ծնողկոմիտեի անդամների հետ: Դասից և վարքից անբավարար աշակերտների հետ աշխատել առանձին, որպեսզի շտկել այդ թերությունները:

Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն) :

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն:

Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը: Անց կացնել զրույցներ հոգևոր տոների մասին:

3.2 Գեղագիտական դաստիարակություն:

Գեղեցիկի հետ առնչվելու և հոգևոր կուլտուրայով զբաղվելու իրավունքը դաստիարակության կարևորագույն տարրերից մեկն է: Գեղագիտական դաստիարակության համակարգը ընդգրկում է սավորողի ուսումնական գործունեությունը, արտադասարանային և արտադպրոցական աշխատանքները, գեղագիտական դաստիարակությունն ընտանիքում, ինքնադաստիարակությունը: Գեղագիտական դաստիարակության ձևերն են՝ զրույց, դասախոսություն, պոեզիայի երեկո, հանդիպումներ: Աշակերտների մոտ ձևավորել էսթետիկական կուլտուրա:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն:

Ռազմահայրենասիրական դաստիարակությունը բազմաշերտ, նպատակաուղղված, անընդմեջ, համակարգված գործընթաց է՝ ուղղված մատաղ սերնդի հայրենասիրական, քաղաքացիական պարտքի, հայրենիքին նվիրվածության և հավատարմության դաստիարակմանը: Հայրենասիրության կրթության վերաբերյալ կազմակերպել քննարկումներ: Կազմակերպել հանդիպումներ և զրույցներ համագործակցող զորամասի սպաների հետ :

3.4 Ֆիզիկական դաստիարակություն:

Ֆիզիկական դաստիարակությունը բնակչության առողջության ամրապնդմանը, աշխատունակության բարձրացմանը և երկարակեցությանը, ֆիզիկապես կոփված և բարոյապես կայուն սերնդի ձևավորմանն ուղղված կազմակերպված գործընթաց է: Ֆիզիկական դաստիարակության առանցքը <<առողջ հոգին առողջ մարմնում>>դրույթն է, իսկ դրա գրավականներն են՝ զբոսանքները, շրջագայությունները, ֆիզիկական աշխատանքը, մարզումը, վարժություններն ու խաղերը:

3.5 Աշխատանքային դաստիարակություն:

Աշխատանքային դաստիարակությունը բազմակողմանի գործընթաց է՝ ուղղված երեխայի մոտ աշխատանքի նկատմամբ հայացքներ, գաղափարներ, աշխատասիրություն դաստիարակելուն, աշխատանքային կարողություններ և հմտություններ ձևավորելուն և զարգացնելուն: Աշխատանքային դաստիարակության խնդիրներն են երեխայի մոտ աշխատանքի նկատմամբ բարեխիղճ վերաբերմունքի, նյութական արժեքների պահպանման, աշխատելու պահանջ և ձգտում ունենալու դաստիարակումը: Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը, աշխատավոր մարդը:

3.6 Բնապահպանական դաստիարակություն:

Էկոլոգիական դաստիարակությունը շրջակա միջավայրի նկատմամբ բարոյագիտական վերաբերմունքի մակարդակի բարձրացմանը նպատակաուղղված, անընդմեջ, համակարգված գործընթաց է, որը հնարավորություն է տալիս ձեռք բերել գիտելիքներ և կարողություններ, դրսևորել բարոյական վարքագիծ բնության հետ փոխներգործության ընթացքում:

4. Դպրոց-ընտանիք կապը:

Հանրակրթական դպրոցին ծնողների միջև ամրապնդել կապը մանկավարժական աշխատանքների և ծնողների կողմից երեխաների դաստիարակության հարցերում միասնական պահանջներ ձևավորելով: Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն, որ պետք է սերտ

կապի մեջ պահեն դպրոց-ընտանիք կապը, որպեսզի աշակերտները ավելի լավ սովորեն: Հաճախակի հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը, պահպանել ծնող- աշակերտ- դպրոց կապը: Աշխատանքներ տանել ծնողկոմիտեի անդամների հետ:

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարման ժամկետը	Կատարողներ
1.	Ներքին կարգապահական կանոններ: Նպատակը՝ իրազեկել աշակերտներին դպրոցի ներքին կանոններին:	01.09	Դասղեկ աշակերտ
2.	«Արտակարգ իրավիճակ» ներկայացնել աղետների առաջացման պատճառները և հետևանքները:	8.09	Աշակերտ Դասղեկ ՆԶՊ ուսուցիչ
3.	<<ՀՀ անկախությունը>>: Հայրենասիրական դաստիարակություն	15.09	Դասղեկ աշակերտ
4.	Աշակերտների իրավունքները և պարտականությունները դպրոցում: Նպատակն է հստակեցնել աշակերտների մոտ իրենց իրավունքները և պարտականությունները	22.09	Դասղեկ աշակերտ
5.	<<Ուսուցի՛չ, ես հպարտ եմ, որ կաս>>: Գիտակցել ուսուցչի դերն ու նշանակությունը	29.10	Դասղեկ աշակերտ
6.	Զրույց <<Ես և ուրիշները >> թեմայով: Ճանաչիր ինքդ քեզ և դիմացինիդ:	06.10	Աշակերտ Դասղեկ
7.	Առցանց անվտանգություն: Սոցիալական ցանցերի	13.10	Աշակերտ Դասղեկ

	առավելությունները և թերությունները:		
8.	Պետական խորհրդանիշեր թեմայով զրույց: Նպատակն է աշակերտներին ներկայացնել խորհրդանիշների ձևավորման ուղին:	20.11	Աշակերտ Դասղեկ
9.	Զրույց <<Հոգատար վերաբերմունք միմյանց նկատմամբ>> թեմայով: Ձևավորել ջերմ հարաբերություններ, սիրել և հարգել միմյանց::	03.11	Աշակերտ Դասղեկ
10.	Թրաֆիքինգի սահմանումը: Մարդկանց շահագործման կանխարգելմանը որքան ծանոթ լինեն, այնքան պաշտպանված կլինեն:	10.11	Աշակերտ Դասղեկ հոգեբան
11.	Առցանց անվտանգություն: Կայքերի և հաշիվների պաշտպանությունը:	17.11	Աշակերտ Դասղեկ
12.	Մեդիագրագիտություն: Ինչպե՞ս լինել մեդիագրագետ քաղաքացի:	24.11	Աշակերտ Դասղեկ
13.	Մասնագիտական կողմնորոշում: Ինքնագնահատում և ինքնաբացահայտում:	01.12	Աշակերտ Դասղեկ ՆԶՊ ուսուցիչ
14.	«Երկրաշարժը և երկրաշարժից պաշտպանվելու վարքականոնը»: Իրազեկել թե ինչպես պաշտպանվել երկրաշարժից:	08.12	Աշակերտ Դասղեկ
15.	Մեդիագրագիտություն: Ստուգի՛ր հեղինակին, որակյալ նյութերը չեն կարող լինել անանուն:	15.12	Աշակերտ Դասղեկ
16.	«Կոնֆլիկտների ծագումն ու հաղթահարումը» բանակցությունների	22.12	Աշակերտ Դասղեկ

	դերը այս դեպքում:		
17.	Աշակերտների գործելաձևը հակառակոր դի հնարավոր հարձակման ժամանակ	12.01	Աշակերտ Դասղեկ ՆԶՊ ուսուցիչ
18.	«Հայրենասեր լինել նշանակում է....» քննարկում	19.01	Աշակերտ Դասղեկ
19.	«Ինքնաներկայացում»: Գնահատել իր բացասական և դրական կողմերը:	26.01	Աշակերտ Դասղեկ
20.	Զրույց <<ձեր երազանքները>> թեմայով:	02.02	Աշակերտ Դասղեկ
21.	<<Կարող եմ օգտակար լինել>>: Թեման հնարավորություն կտա աշակերտների մոտ ձևավորել դրական հատկանիշներ:	09.02	Աշակերտ Դասղեկ
22.	«Քանի լեզու գիտես այդքան մարդ ես» թեմայով զրույց	16.02	Աշակերտ Դասղեկ
23.	«Եթե ես լինեի...» թեմայով քննարկում, նպատակն է վեր հանել կարողություններն և հմտությունները	23.03	Աշակերտ Դասղեկ
24.	«Բնական պաշարներ» թեմայով քննարկումը կձևավորի գիտելիքներ արդյունաբերության տարբեր ոլորտներում	01.03	Աշակերտ Դասղեկ
25.	Զրույց <<ազգային ինքնություն>> թեմայով:	15.03	Աշակերտ Դասղեկ
26.	«Ազգ և պետություն» թեմայով բաց քննարկում և վերլուծություն	22.03	Աշակերտ Դասղեկ
27.	Առցանց անվտանգություն: Համացանցի միջոցով թրաֆիքինգի զոհերի հավաքագրում:	05.04	Աշակերտ Դասղեկ

28.	Բարեկամներ և թշնամիներ» քննարկման միջոցով ներկայացնել հայ-ադրբեջանական խնդիրների ծագման պատճառները	12.04	Աշակերտ Դասղեկ
29.	«Եկեղեցին և ազգը» քննարկման միջոցով աշակերտների մոտ հիմնավորել եկեղեցու դերը հայ ժողովրդի կյանքում:	19.04	Աշակերտ Դասղեկ
30	«Հայոց մեծ եղեռն» աշակերտներին ներկայացնել թուրքերի կատարած ոճրագործությունները, նրանց մոտ սերմանել հայրենասիրություն:	26.04	Աշակերտ Դասղեկ
31	Պետք է արդյո՞ք խնայել» խթանելով աշակերտների ստեղծագործական մտածողությունը ձևավորել բնության և բնական պաշարների հանդեպ խնայող վերաբերմունք	03.05	Աշակերտ դասղեկ
32	«Ազգային զարթոնք»: Ներկայացնել հայերի մասնակցությունը մի շարք մարտական գործողություններին: Նպատակն է աշակերտների մոտ ձևավորել ազգային գիտակցության արժեհամակարգը:	10.05	Աշակերտ Դասղեկ
33	Առցանց անվտանգություն: Բջջային հեռախոսի դրական և բացասական կողմերը; Հաղորդակցություն անծանոթների հետ:	17.05	Աշակերտ Դասղեկ
34	Ներքին կարգապահական հարցերի քննարկում:	24.05	Աշակերտ Դասղեկ